

Վարկ վերցնելիս Ղուք պետք է տեղեկացված լինեք ...

Հարգելի՛ գործընկերներ,

Մենք Ձեզ տեղեկացնում ենք .

Տոկոսադրույքների հաշվարկման կարգը.

Ուշադրություն՝ն. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ : ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՄ, ԹԵ ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ՈՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ: ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՕՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ՝ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՓԱՍՏԱՑԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՍԲ՝ ՎԱՐԿԻ ԱՐԺՈՒՅԹՈՎ: ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ Է ԸՆԴՈՒՆՎՈՒՄ 365 ՕՐ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՏԱՐԻՆ:

Օրինակ

Վարկի մնացորդ՝ 1.000.000 ՀՀ դրամ

Վարկի տարեկան տոկոսադրույք՝ 15 %

Օրական տոկոսագումարի հաշվարկ՝ $1.000.000 * 15\% / 365 = 410.96$

Տոկոսադրույքի փոփոխման կարգը.

Վարկային կազմակերպությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոփոխել տրամադրված վարկի տոկոսադրույքը, եթե առկա են ներքիիշյալ հանգամանքների որևէ մեկը, մասնավորապես, եթե՝ տոկոսադրույքի վերանայման (այսուհետ՝ Վերահաշվարկի օր) և վարկավորման պայմանագրի կնքման օրվա դրությամբ տեղի է ունեցել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված 1 ԱՄՆ դոլար-դրամ փոխարժեքի 5 (հինգ) տոկոս և ավել փոփոխություն (դրամի արժեզրկում):

տեղի են ունեցել ֆինանսական շուկայից Վարկային կազմակերպության ներգրավված և/կամ շուկայում տեղաբաշխած միջոցների տոկոսադրույքների տատանումներ, և/կամ

ֆինանսական շուկայում իրատեսական են դարձել վարկատեսակների տարեկան տոկոսադրույքի փոփոխման նախադրյալները, և/կամ

պարզվի, որ Վարկառուի կողմից ներկայացված տվյալները /փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը/ անարժանահավատ են, և/կամ

Վարկառուն Վարկն օգտագործել է պայմանագրով նախատեսված նպատակին ոչ համապատասխան, և/կամ

Վարկառուն չի ներկայացնում վարկավորման պայմանագրով նախատեսված տեղեկատվությունը /փաստաթղթերը, հաշվետվությունները/ կամ թույլ է տալիս դրանց ներկայացման ժամկետների կետանց, և/կամ

Վարկառուն չի կատարում գրավադրված գույքի ապահովագրությունը՝ Վարկային կազմակերպության կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում, և/կամ

առկա են ՀՀ օրենսդրությամբ դրա համար նախատեսված այլ հիմքեր:

Վարկային կազմակերպությունը տոկոսի չափի փոփոխման մասին առնվազն 30 /երեսուն/ օր առաջ ծանուցում է Վարկառուին, ինչպիսի հանգամանքը հիմք է հանդիսանում ծանուցման մեջ նշված ժամկետից փոփոխված տոկոսը կիրառելու համար: Եթե Վարկառուն համաձայն չէ փոփոխված տոկոսի հետ, ապա նա իրավունք ունի վաղաժամկետ լուծել համապատասխան վարկավորման պայմանագիրը՝ կատարելով Վարկային կազմակերպության հանդեպ տվյալ պայմանագրով իր ունեցած պարտավորություններն ամբողջ ծավալով:

Հաճախորդի վարկի տրամադրման համար դրական գործոններ կարող են հանդիսանալ՝

- Վարկային կազմակերպության և հաճախորդի միջև ձևավորված հարաբերությունների պատմությունը
- Գործարար համբավը
- և այլն

Վարկի տրամադրման վերաբերյալ բացասական եզրակացության հիմքերն են.

- դիմելու պահին հաճախորդի ֆինանսական դրության վերլուծության արդյունքների անհամապատասխանությունը ներքին իրավական ակտերի չափանիշներին,
- ներկայացված ծրագրի անբավարար շահութաբերությունը և բարձր ռիսկայնությունը,
- վարկի օգտագործման նպատակների թերհիմնավորումը,
- ներկայացված փաստաթղթերի անարժանահավատությունը,
- վարկի ապահովության անբավարար իրացվելիությունը,
- հաճախորդի գործունեությունից շրջակա միջավայրի աղտոտումը կամ վնասումը,
- հաճախորդի բացասական վարկային պատմությունը,
- այլ պատճառներ:

Վարկային ռեզիստրին տրամադրվող տեղեկատվություն

Ուշադրություն՝ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ և ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՆ ԶՎՃԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ: ՁԵՐ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼԻՄ: